

10. ԿԱՐԵԼԻ Է, ԱՐԴՅՈՔ, ԴԱՍԸ ՄԱՏՉԵԼԻ ՄԱՏՈՒՑԵԼ

Առաջին հայացքից թվում է՝ կարելի է, ինչու՝ չէ, սակայն խորքային մոտեցման դեպքում պարզվում է, որ այս կառույցի մեջ ոճական սխալ կա, որ **մատչելի**–ն ու **մատուցել**–ը նույնարմատ, սակայն տարահիմք կազմություններ են, հետևաբար այդ կապակցության մեջ կրկնություն կա, ուստի դրա կիրառությունը խրախուսելի չէ:

Ո՛րն է գաղտնիքը:

Թե՛ **մատչելին**, թե՛ **մատուցելը** ծագում են գրաբարի **մատչիմ** բայից: **Մատչիմ** նշանակում է «մոտենալ, մոտ գալ, մերձենալ» (չեզոք սեռի իմաստով): Այս բայի ապառնի դերբայն է՝ **մատչելի** (բայի առաջին հիմքից), որ նշանակում է՝ «մոտենալու». ժամանակի ընթացքում այս բառը ձեռք է բերել «ըմբռնելի, հասկանալի, հասանե-

լի» իմաստներ, այնուհետև՝ «ոյուրին, հեշտ, հաղթահարելի» և այլն: Հմմտ. մատչելի առաջադրանք, մատչելի խնդիր, մատչելի ամրություն և այլն: Հակամիջը՝ **անմատչելի**. «դժվար, խրթին, անհասկանալի, անհասանելի, անհաղթահարելի»:

Իսկ ինչ է **մատուցել**–ը: Դա նույն **մատչիմ** բայի պատճառական կազմությունից է (բայի երկրորդ հիմքից). **մատուցանել**, բառացի՝ «մոտեցնել»: Պատմական հնչյունափոխության հետևանքով բառի կառուցվածքից –**ան** ածանցը ընկել է, և բառն արդի հայերենին է անցել **մատուցել** ձևով, ինչպես՝ **սպանանել > սպանել, բեկանել > բեկել, սնանել > սնել** և այլն: **Մատուցել** բայի մի դերբայածան է՝ **մատուցող**, որ ձեռք է բերել գոյականի արժեք, բառացի՝ «(սնունդ) մոտեցնող»:

Պատճառականի բայահիմքն է՝ **մատույց** (< մատույց), որից ունենք մի շարք նորակազմություններ, ինչպես՝ **կառամատույց** – նախապես՝ «կառքեր մատուցելու՝ մոտեցնելու հրապարակ», այնուհետև՝ «ուղևորման հարթակ երկաթուղային կայարանում», **նավամատույց** – «նավահանգստի առափնյա այն հատվածը, որին անմիջապես մոտենում ու կանգ է առնում նավը» և այլն:

Վերադառնա՞նք **դասը մատուցելուն**: «Դասը մատուցել» նշանակում է դասը հաղորդել՝ տալ: Դուք կարող եք դասը **մատուցել** վարպետորեն, ամբողջական կերպով, հետաքրքիր, բովանդակալից և այլն, սակայն **մատչելի մատուցել** չեք կարող, դրանք երկուսն էլ նշանակում են **մոտենալ**՝ մեկը՝ չեզոք, մյուսը՝ պատճառական սեռի իմաստով:

11. ՄԱՐԿԱՆԱՑՈՒ Է ԱՐԴՅՈՔ, ՄԱՐԴԸ (ԿԱՍ ԻՆՉ Է ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ)

Անշուշտ որ մարդ արարածը մահկանացու է. կապ ունե՞ն, սակայն, **մարդ** և **մահ** բառերը, եթե՛ այո, ապա ինչպիսին է այդ կապը, և կամ գիտակցվում է արդյոք այն արդի լեզվամտածողությամբ:

Այս հարցերով զբաղվում է լեզվաբանական հետազոտության **ստուգաբանություն** բաժինը, որ քննում է բառի կամ ձևույթի ծագումը, նրա նախնական իմաստը, կազմը (կառուցվածքը, ձևը), գործածությունը, ինչպես նաև դրանց հետագա զարգացման պատմությունը: Ստուգաբանորեն վերականգնում են բառի նախնական սկզբնական իմաստը՝ բնիմաստը: Բառերը լինում են իմաստով պատճառաբանված և չպատճառաբանված. ինչպես՝ **մարդ** և **մարդկություն**: Սրանցից **մարդ** բառը բառակազմորեն անտրոհելի է, հետևաբար նրա իմաստը չպատճառաբանված է, երկրորդը բառա-

կազմորեն տրոհելի է, բարդության իմաստը բխում է բաղադրիչների իմաստներից, հետևաբար նրա իմաստը պատճառաբանված է:
Ստուգաբանում են իմաստով չպատճառաբանված բառերը, տվյալ դեպքում՝ **մարդ** բառը:

Ստուգաբանորեն հաստատվել է, որ այն բնիկ հայերեն բառ է. նրա ստուգաբանության բանալին տալիս են ազգակից լեզուները:

Հմմտ. սանսկրիտ **marta, martya** – «մահկանացու, մարդ», **marta** – «մեռյալ, մահ», զենդերեն՝ **marata** – «մահկանացու», հին պրսկ.՝ **martiva** – «մարդ», պրսկ. **mard** – «մարդ», լատին. **mors, mortis** – «մահ», հունարեն՝ **mortos** – «մահկանացու, մարդ» և այլն:

Ըստ այդմ, **մարդ** ստուգաբանորեն նշանակում է «մահկանացու», այն ծագում է հնդեվրոպական **mer (մեռ)** արմատի **mar** ծայնդարձով տարբերակից՝ **դ** ածականով՝ **մար-դ > մարդ**: Հնդեվրոպական **mer (մեռ)** արմատից ունենք՝ **մեռ-ան-ել > մեռնել**, նույն արմատի ծայնդարձով տարբերակից ունենք **մահ** ձևը, ինչպես՝ **մահ-ան-ալ** և այլն:

Հետևաբար, **մար (դ) –մեռ–մահ** ձևույթներն արմատի տարբերակներ են՝ նախնական ընդհանուր, մերձավոր նշանակություններով:

Այնպես որ, **մարդ** արարածը որքան էլ երկար ապրի, միևնույն է, չի կարող խուսափել իր արմատի ստուգաբանական մյուս «նշանակություններից», վերջիվերջո՝ նա **մահկանացու** է:

12. ՈՒՄ Է ՈՒՂՂՎԱԾ ԿԵՑՑԵ–Ն, ԿԱՍ ՈՒՄ ՀԱՍՑԵ–Ն ԵՆՔ ՈՐՈՆՈՒՄ (ԿԱՍ ԲԱՌԱՉԵՎԵՐԻ ՔԱՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ)

Հայերենում կան զգալի թվով բառեր (գոյականներ, ածականներ, մակբայներ և վերաբերականներ), որոնք առաջացել են բառիմաստի մթագման ուղիով:

Դա լեզվական այն երևույթն է, երբ ժամանակի ընթացքում բառաձևի բառական ու քերականական նշանակությունները մթագմում են, բառաձևը քարանում է, և այլևս չի գիտակցվում նրա թեքված ձև լինելը: Այդպիսի ձևերը ժամանակի ընթացքում վերաիմաստավորվում են որպես ինքնուրույն բառեր:

Դիտարկենք **կեցցե** և **հասցե** բառերի նախնական իմաստներն ու արժեքները և հետևենք դրանց փոփոխությունների ընթացքին:

Այսպես, **կեցցե** բառը գրաբարում **կեալ** (ապրել) բայի խոնարհված մի ձև է, գրաբարի ստորադասական եղանակի երկրորդ ապառնի բայաձև՝ **կեցցե**, որ աշխարհաբար նշանակում է «ապրելու է, ապրի, կապրի, պիտի ապրի»:

Լսենք Եզնիկին. «Ձի մարմնաւորի չէ հնար՝ թէ ի ջուրս **կեցցէ**, այսպէս և ոչ ջրականին՝ թէ ի ցամաքի **կեցցէ**» (99) (Ռրովիետս Ինչպէս մարմնավորը՝ ցամաքում բնակվողը, հնարավորություն չունի, որ ջրի մեջ (ջրերում) ապրի, այնպէս էլ ջրային կենդանին, որ ցամաքում ապրի):

Կեցցե (< **կեցցէ**) բառաձևը աստիճանաբար կորցրել է իր նյութական բովանդակությունը և վերածվել սպասարկու բառի՝ ծայնարկության: Արդի հայերենում **կեցցե** այլևս չի գիտակցվում բայական արժեքով, այն արդեն ծայնարկություն է՝ **կեցցե**: Գրաբարյան նույն բայի նույն եղանակի նույն ժամանակի մեկ այլ բայածևից է ծագել արդի հայերենի **կեցցե՛ս** ծայնարկությունը:

Հետաքրքիրն այն է, որ որոշ լեզուներում **կեցցե**՝ ծայնարկության համար դարձյալ գործածում են «ապրել» նշանակությամբ բայեր, հմնտ. գերմ. **Es lebe** (< leben – ապրել), անգլ. **long live...** (live – ապրել) և այլն:

Իմաստաարժեքային փոփոխությունների նույն ճանապարհն է անցել գրաբարյան **հասցէ** (> **հասցե**) բայածևը:

Գրաբարում **հասանել** բայի ստորադասական եղանակի երկրորդ ապառնի ժամանակի մի բառածև է **հասցէ**-ն. «հասնելու է, հասնի, կհասնի, պիտի հասնի» նշանակություններով:

Լսենք դարձյալ Եզնիկին. «Ապա իմացեալ Ջրուանայ, ասէ. «Երկու որդիք են յորովայնի անդ, որ ոք ի նոցանէ վաղ առ իս **հասցէ**, զնա թագաւոր արարից» (114) (Ապա Ջրվանը, սա իմանալով, ասում է. «Իմ որովայնում երկու զավակ կա. նրանցից ով որ շուտ ինձ մոտ **հասնի**, նրան թագավոր կդարձնեն»):

Հասցե բայածևի գրաբարյան իմաստը ժամանակի ընթացքում մթազնել է, բառածևն էլ քարացել է և անկախացել առարկայական իմաստով, որպէս գոյական: Այն ունի «մակագրություն նամակի, ծանրոցի վրա՝ առաքման տեղի և ստացողի մասին. մեկի բնակության վայրը» իմաստները:

Սերող այս հիմքով ունենք մի շարք նորակազմություններ. **հասցեագիր**, **հասցեագիրք**, **հասցեագրել**, **հասցեագրում**, **հասցեասեղան**, **հասցեատեր**, **հասցեատուն**, **հասցեաքարտ**, **հասցեահամար** և այլն:

Ի վերջո, որքան էլ բառածևի քարացումը նոր իմաստ հաղորդի անկախացած լեզվական միավորներին, այնուամենայնիվ, նախկին և ներկա իմաստների աղերսներն զգացվում են: